600.0382.05.10.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

5 հոկտեմբերի 2018 թվականի №382Ա
ք. Երևան

«ԱԿԻՆՔ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0181 ԼԻՑԵՆԶԻԱՆ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ԱԿԻՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի հոկտեմբերի 2-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Վերաձևակերպել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի սեպտեմբերի 30-ի «ԱԿԻՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ծաղկավան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորություն) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №133Ա որոշմամբ «ԱԿԻՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Ծաղկավան» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0181 լիցենզիան՝ «Գտնվելու վայրը» տողը շարադրելով նոր խմբագրությամբ.

   «Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ավան Առինջ 2 մկրշջ. 2/4 շ., 41 բն.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հոկտեմբերի 6-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
5 հոկտեմբերի 2018